ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցիտնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վաչիկ Վարդանյանի 2022 թվականի օգոստոսի 22-ի N 04 գրության <<Եղվարդ>> ֆուտզալ ակումբի մարզիչ Գառնիկ Հովհաննիսյանի 2022 թվականի օգոստոսի 8-ի N 1 գրության պահանջից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2022 թվականի բյուջեում ենթադրում է 1900.0 հազար դրամով ծախսերի ավելացում: